

Գիտաժողով ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում

23.12.2013



Ս/թ դեկտեմբերի 21-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղում տեղի ունեցավ գիտաժողով «ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները» թեմայով:

Գիտաժողովի շրջանակներում «Զբոսաշրջության զարգացման հեռանկարները Վայոց ձորի մարզում» թեմայով զեկուցումով հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ, ՀՊՏՀ դասախոս, տ.գ. թեկնածու, դոցենտ Էդգար Ղազարյանը:

Գիտաժողովը կազմակերպվել էր ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի հիմնադրման 6-րդ տարեդարձի առթիվ: Գիտաժողովի նյութերը կտպագրվեն առանձին գրքույկով: